ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026թթ. աշխատանքների» ծրագրի հանրային քննարկման

ՀՀ Սյունիքի Մարզ. գ Վարդանիձոր *28.03.2024թ*

2024 թվականի մարտի 28-ին, ժամը 17:00-ին, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր գյուղի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գ. Վարդանիձոր, Փ. 1, Շ. 1) տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 2024-2026 թթ. աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումը:

Հանրային քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավար՝ Բագրատ Զաքարյանը, ներկա էին Մեղրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Խաչատուր Անդրեասյանը, «Պրո Կոնստրակտ» ՍՊԸ (Նախաձեռնող) տնօրեն Նարեկ Գևորգյանը, երկրաբան Մանվել Հարությունյանը, Վարդանիձոր գյուղի վարչական ղեկավար Վլադիկ Գևորգյանը, Մեղրիի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Մեղրի համայնքի ղեկավար՝ Բ. Զաքարյանը: Նա շնորհակալություն հատնեց բոլորին ներկա գտնվելու համար և նշեց, որ ընդունելով Նախաձեռնողի տնօրենի հանրային քննարկման կազմակերպման հայտը, օրենքով սահմանված կարգով իրականացվել է համապատասխան փաստաթղթերի հրապարակումը տարբեր էլ.հարթակներում, փակցվել են Ագարակ և Մեղրի քաղաքների , համայնքի գյուղական բնակավայրերի վարչական շենքերի նախատեսված վայրերում:Նշեց նաև , որ հանրային քննարկման է դրված Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների և խոսքը փոխանցեց Նախաձեռնողի տնօրեն Նարեկ Գևորգյանին:

Ն. Գևորգյանը շնորհակալություն հայտնեց հանրային քննարկումը պատշաճ կերպով կազմակերպելու համար, այնուհետև մասնակիցներին ներկայացրեց հանդիպման օրակարգը . Նախաձեռնողը մտադիր է իրականացնել ՀՀ Սյունիքի մարզի Տերտերասարի ոսկու հանքավայրի վերագնահատման աշխատանքներ:

Նշեց, որ նախկինում վերոհիշյալ ոսկու հանքավայրը շահագործվել է մինչև 2012 թվականը, իսկ վերջին վերագնահատումը կատարվել է 2003 թ. , ուստի առկա տվյալների ոչ բավարար լինելու պատճառով , ցանկանում են իրականացնել նոր վերագնահատում, որը ներառելու է փորձնական հանույթներ՝ ոսկու հանքավայրի հանքանյութի , տնտեսական պաշարների քանակի ճշտգրտման և հանքի հետագա շահագործման նպատակով:

Այնուհետև սկսվեց հարցուպատասխան:

Վերագնահատումների ընթացքում ոսկու հանքանյութի պաշարների տեղեկատվության վերաբերյալ հարցադրում կատարեց Մեղրի համայնքի բնակիչ Մկրտիչ Մկրտչյանը:

Ի պատասխան, Մանվել Հարությունյանն ասաց, որ հանքը շահագործվել է մինչև 2012 թ., իսկ ընդհանուր ֆոնդերում՝ էլեկտրոնային տարբերակով, չի պահպանվել պաշարների վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ պատճառով նոր տեխնոլոգիալական պայմաններում պետք է իրականացվի նոր վերագնահատում մնացորդային պաշարների վերաբերյալ: Նշեց ,որ եթե նախկինում 1 գրամ ոսկին հաշվարկվել և գնահատվել է 8 դոլլարին համարժեք, ապա այսօր հաշվարկներն իրականացվում են նոր գնով ու այլ մոտեցումներով: Հավելեց, որ համալիր աշխատանքների կատարման արդյունքում պետք է տրվի հանքաքարի որակական և քանականան գնահատականը:

Հավելեց նաև, որ ընկերության համար ռիսկային գործոններն են երկրաբանահետազոտական աշխատանքերի ոչ դրական արդյունքները, որի դեպքում չեն իրականացվի հանքի շահագործման աշխատանքներ: Նախնական վերագնահատման աշխատանքների ընթացքում պետք է իրականացվի ֆիզիկական ծավալների նմուշարկում, առանձին բեկորներ պետք է ուղարկվեն լաբորոտորիաներ, իսկ վերջում պետք է իրականացվի հանքանյութի հանում մնացորդային պաշարների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, իսկ նոր տեխոլոգիական մեթոդներով պետք է իրականացվի հանքաքարի փորձնական հանույթ ՝ Օրենքով սահմանված կարգով, ՀՀ Կառավարության թույլտվությունը և հանքաքարի անհրաժեշտ քանակությունը ստանալու դեպքում կիրականացվեն փորձարարական աշխատանքեր:

Մ. Մկրտչյանը հարցրեց ,թե որքա՞ն մակերես պետք է հատկացվի վերագնահատողական աշխատանքներ իրականացնելու համար, ի՞նչ սոցիալական ուղղվածություն կունենա և արդյո՞ք ընկերությունը հայկական է:

Մ. Հարությունյանը նշեց, որ համայանքի դրական արձագանքի դեպքում պետք է կատարվեն ճշտումներ տեխնիկական պարամետրերի՝ օրինակ մակերեսի վերաբերյալ , քանի որ նախկինում շահագործված հանքից կատարվել են հանումներ: Հանքավայրի ընդհանուր պատկերի առկայության դեպքում նոր կնշվի հայցման ենթական տարածքների մասին: Նա նշեց, որ Ընկերության սեփականատերերն են Սարգիս Վարդումյան և Արամ Ստեփանյան, իսկ Ընկերությունը հայկական կապիտալով է :

Աշոտ Մկրտչյանը հետաքրքրվեց պոչամբարի տեղադիրքի մասին:

Մ. Հարությունյանը պարզաբանեց ,որ ուսումնասիրությունները տևելու են մոտ 3 տարի, և կախված արդյուքներից կմտածեն պոչամբարների տեղադիրքի և թափոնների մասին: Նշեց, որ ուսումնասիրություններից, հետախուզություններից, նոր քանակական և որակական դրական գործոններից հետո կկազմվի նոր նախագիծ՝ թափոնների և պոչամբարի մասով : Հավելեց , որ ուսումնասիրման և վերագնահատման աշխատանքները չեն նախատեսում նոր լեռնային փորվածքներ,այլ արդեն գոյություն ունեցող ստորգետնյա փորվածքներ, որով պետք է վերանմուշարկվեն և ուղարկվեն լաբորոտորիա՝ գործարանային պայմաններում նմուշարկում ունենալու համար:

Մ. Մկրտչյանը , հարցրեց, թե 1 տոննա հանքաքարից որքա՞ն գրամ է ոսկի դուրս գալիս :
Մ. Հարությունյանը պատասխանեց, որ ՀԽՍՀ հանքաքարի կորզման տեխնոլոգիաները համեմատաբար թույլ էին, իսկ մնացորդային պարունակությունը՝ նվազագույն, ներկայումս պայմանները թույլ են տալիս, որ կորզումները հասնեն առավելագույնի՝ 0,1, 0,2 0,3 գրամ: Ներկայացրեց, որ Ամուլսարի ոսկու հանքավայրում 1 տոննա հանքաքարում կա 0,8 գրամ ոսկի, իսկ Տերտերասարի հանքավայրում ՝ միջինացված 5 կամ 6 գրամ :

Մեղրի համայնքի բնակիչ, ավագանու անդամ Արարատ Թումանյանը ողջունեց Մեղրի համայնքում նման խոշորածավալ ներդրումների կատարումը: Եվ հարցրեց, թե ինչո՞վ է պայմանավորված երեք տարիների հետախուզական աշխատանքները, ուսումնասիրությունը և արդյո՞ք համայնքը կհամալրվի նոր աշխատատեղերով:

Մ. Հարությունյանը պարզաբանեց, որ ուսումնասիրությունները 3 տարիների ընթացում պայմանավորված են նրանով, որ չեն նախատեսվում լեռնային և մակերեսային փորվածքներ , այլ եղածի վրա իրականացնում են վերագնահատում:

Տեղեկացրեց նաև, որ կլինի մինչև 10 աշխատատեղ: Հավելեց, որ պաշտպանվում են համայնքի շահերը, իրականացվելու են սոցիալական ներդրումներ համայնքապետարանի հետ համատեղ:

Խոսքը փոխանցվեց Բ. Զաքարյանին: Նա ողջունեց ընկերության հայկական լինելը և այն, որ գործունեությունը իրականացնելու է հենց Նախաձեռնողը: Հավելեց, որ Ընկերությունը աշխատանքները իրականացնելու է ստորգետնյա եղանակով՝ հետախուզական աշխատանքերի դրական արդյունքների դեպքում: Բարձրաձայնեց բաց հանքի դրական և բացասական կողմերի մասին՝օրինակ բերելով Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը:

Շարունակելով խոսքը՝ Բ. Զաքարյանը տեղեկացրեց հանրային լսումների նոր օրենք ընդունվելու մասին, այն , որ լսումները իրականացվելու են 4 փուլի փոխարեն 2 փուլով, իսկ ցանկացած հանրային լսում իրականացնելուց հետո եզրակացությունը ներկայացվում է ավագանուն: Դրական պատասխանի դեպքում կազմվում են համապատասխան փաստաթղթերի փաթեթներ և ներկայացվում են Նախաձեռնողին: Բ Զաքարյանը շեշտեց իրականացվող գործընթացների պարզ ու թափանցիկ լինելու մասին: Հավելեց, որ հանքը կշահագործվի նվազագույն վնաս հասցնելով բնապահպանությանը, ինչպես «Լիճքվազ» ՓԲԸ-ն:

Խոսքը փոխանցվեց երկրաբան Մ. Հարությունյանին: Նա նշեց, որ նախկին ընկերությունը հիմնականում իականացրել է ապարների հեռացում, իսկ Նախաձեռնողը իրականացնելու է ստորգետնյա նոր մեթոդիկայով և տեխնոլոգիայով: Դրական արդյունքների պայմաններում կիրականացվեն նաև սոցիալական աջակցության ծրագրեր:

Բ. Զաքարյանը նշեց, որ պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ արտադրողականություն չապահովելու դեպքում սոցիալական աջակցությունների տրամադրումը իրատեսական չեն լինի: Իսկ մինչ այդ հիշեցրեց, որ 2023 թ-ից մեկնարկած նախագծերի կետերով ցանկացած հանքարդյունահանող ընկերություն իր օգուտներից ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում, որտեղ արտացոլվում է ընկերությունների շահույթի 2 տոկոսի փոխանցումը ազդակիր համայնքների բյուջեին, որը տրամադրվում է մանկապարտեզների, դպրոցների վերակառուցման և նորոգման աշխատանքների իրականացմանը: Տեղեկացրեց, որ հանրային լսումները այսուհետ իրկանացվելու են ազդակիր բնակավայրերում :

Հիշեցրեց, որ նույն հանրային լսումը տեղի կունենա Լիճք բնակավայրում, որտեղ ևս իրականացվելու են հետախուզական այնուհետև հանքարդյունահանման գործընթացներ:

Բնակիչներից հետաքրքրվեցին նաև ավտոճանապարհաշինարարական աշխատանքներից, հատկապես այն, որ միջբնակավայրային ճանապարհները ասֆալտապատ չեն:

Ի պատասխան հարցին՝ Բ. Զաքարյանը ներկայացրեց արդեն կատարված և կատարվող աշխատանքների մասին, ինչպիսիք են ճանապարհների վերանորոգումը, բարելավումը, տանիքների փոխարինումը: Մանրամասնեց, որ վերոհիշյալ աշխատանքների կատարման ծրագիրը 5 օր առաջ ներկայացվել և հավանության է արժանացել ՀՀ Կառավարության կողմից: Այդ և այլ ծրագրերի շրջանակներում իրականացված շինարարական ,նորոգման, կառուցման աշխատանքերը ապահովել են բնակավայրերի դպրոցների, մանկապարտեզների լավ շենքային պայմաններ: Նշեց, որ վերջին շրջանում վերոհիշյալ աշխատանքները հիմնականում իրականացվում են սահմանամերձ Նռնաձոր բնակավայրում:

Ավարտելով հանրային լսումը Բագրատ Զաքարյանը նշեց, որ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը հանքարդյունաբերությունն է :

Եվս մեկ անգամ տեղեկացրեց, որ նույն առարկայով հանրային լսումը տեղի կունենա 29.03 թ. Լիճք բնակավայրում :

Հանրային լսումը նախնական դրական կարծիքներով ամփոփվեց և համարվեց ավարտված :

Հանրային քննարկումների պատասխանատու՝
Մեղրի համայնքի ղեկավար՝
Բ. Զաքարյան

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝
Ն.Գևորգյան